

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 մարտի 2017 թվականի N 296-Ն

**ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ, ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ  
ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 278-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնում հաշվառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Կ. Կարապետյան**

2017 թ. մարտի 27  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2017 թվականի  
մարտի 23-ի N 296-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ, ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ  
ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ**

1. Սույն հավելվածով կարգավորվում են տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնում հաշվառելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հաշվառվում են հարկային մարմնի կողմից:

3. Տոտալիզատորի կազմակերպման գործունեության մասով հարկային մարմնի կողմից հաշվառման ենթակա են տոտալիզատորի կազմակերպչի կողմից խաղադրույքների ընդունման համար նախատեսված համակարգիչները: Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության մասով հարկային մարմնի կողմից հաշվառման ենթակա են խաղասրահում ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները:

4. Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից հաշվառվում են Հայաստանի

Հանրապետության հարկային օրենսգրքի 275-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմին ներկայացված արտոնագրային հարկ վճարող համարվելու մասին հայտարարության հիման վրա:

5. Հարկային մարմինը տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հաշվառում է ըստ առանձին հարկ վճարողների և ըստ գործունեության իրականացման վայրերի (հասցեների):

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**